# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն Վ1Պ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 13 | Անիոս Լաբորատորիաներ | Սուրֆանիոս | Սուրֆանիոս | Անիոս Լաբորատորիաներ | Բաղադրությունը – 2,5% , N,N-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլպրոպան 1,3-դիամին -5,1% (ЧАМ), ինչպես նաև օժանդակող բաղադրիչներ՝ էթիլենդիամինտետր աքացախաթթու, ոչ իոնածին մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, հոտավետ նյութեր և ջուր: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, տուլարեմիա, լեգիոնելոզ) նկատմամբ՝ ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նախարարության կողմից հաստատված մեթոդական իրահանգներով: Փաթեթավորումը- 1լիտր ծավալով պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվում է 0,25%- 400 լիտր աշխատանքային լուծույթ, որն ապահովում է հակաբակտերիալ (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը 60 րոպեում (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական իրահանգներով): Աշխատանքային լուծույթն ունի նաև լվացող և հոտակլանիչ ազդեցություն: Աշխատանքային լուծույթի պատրաստումը սենյակային ջերմաստիճանային պայմաններում՝ 15°C-25°C-է : Ախտահանումը իրականացվում է սրբելու, ցողելու և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թրջելու եղանակով: Ախտահանիչ նյութի pH-12,3: Ախտահանիչ նյութի հակամանրէային ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում: Աշխատանքային լուծույթով սենքերում սրբելու եղանակով մակերեսների մշակման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման անհրաժեշտություն չկա և կարելի է կատարել հիվանդի ներկայությամբ: Ինչպես նաև հատակի ընթացիկ մաքրման ժամանակ հետագա ջրով լվանալու պահանջ չկա (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվում են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Օգտագործվում է մակերեսների, գույքի, սպիտակեղենի, լաբորատոր սպասքի և այլ պարագաների ախտահանման և մաքրման համար: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի հավաստագրի/երի առկայություն: Ունի ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի 1/2-ի առկայություն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱրմենՖարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 13 | | | | | |